

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ հ.2

2021 թվականի հոկտեմբերի 11-ին տեղի ունեցավ Երևանի Ա. Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոցի ծնողական խորհրդի արտահերթ նիստը՝ մասնակցությամբ 42 անդամների /հարգելի պատճառով բացակա՝ 9/:

Օրակարգում՝

1. Դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդներին տրված ձայների հաշվիչ հանձնաժողովի ընտրություն /զեկուցող՝ ծնողխորհրդի նախագահ Ա.Աբրամյան/:
2. Դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդների զարգացման ծրագրերի քննարկում /զեկ.զեկ.՝ Տ.Մելքոնյան, Դ.Մինասյան, Գ. Սարուխանյան/:
3. Ծնողխորհրդի թեկնածուի ընտրություն:

Լսեցին՝ հաշվիչ հանձնաժողովի ընտրության հարցը: Ծնողխորհրդի նախագահ Աննա Աբրամյանը, նիստը սկսելով, առաջարկեց ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդներին ծնողխորհրդի տված ձայները հաշվելու համար:

Արտահայտվեցին՝ ծնողներն առաջարկեցին Լ.Քոչարյանի, Ն. Սարգսյանի և Ա. Սարգսյանի թեկնածությունները: ԾՆՈՂԽՈՐՀՈՒՐԴ ՈՐՈՇՈՒՄ Է՝

ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Լ.Քոչարյան,
2. Ն. Սարգսյան,
3. Ա. Սարգսյան:

Ծնողխորհուրդը բաց քվեարկությամբ ընտրեց հաշվիչ հանձնաժողով:

Լսեցին՝ դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդների զարգացման ծրագրերը:

Համաձայն ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի հ. 319-Ն և 2021 թվականի օգոստոսի 27-ի հ. 1380-Ն որոշումների՝ իրենց ծրագրերը ներկայացրին Տ. Մելքոնյանը, Դ.Մինասյանը, Գ. Սարուխանյանը: Հավակնորդները պատասխանեցին ծնողներին հետաքրքրող հարցերին: Ծավալվեց քննարկում:

Արտահայտվեցին՝ Ա. Աբրամյանն ասաց, որ բոլոր ծրագրերը ներկայացվեցին հավուր պատշաճի, բոլոր հավակնորդներն էլ հետաքրքիր ծրագիր էին կազմել՝ ուղղված դպրոցի զարգացմանն ու մասնավորապես կրթության որակի բարձրացմանը:

Ն. Բարսեղյանը խոսեց դպրոցի ձեռքբերումների գործում Գ. Սարուխանյանի ավանդի մասին:

Եվզենյա Մելքոնյանն ասաց, որ հավակնորդ Դ. Մինասյանը նշել է թերություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը:

Անցկացվեց փակ քվեարկություն, որին մասնակցեց ծնողխորհրդի 42 անդամ:

Լսեցին՝ ընտրության՝ հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:



Հանձնաժողովը փաստեց, որ փակ գաղտնի քվեարկության արդյունքում ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

1. Տ.Մելքոնյան – 1 կողմ,
2. Դ.Մինասյան – 0,
3. Գ.Սարուխանյան – 41 կողմ:

Ելնելով փակ գաղտնի քվեարկության արդյունքներից՝ ծնողխորհուրդը ՈՐՈՇՈՒՄ Է՝

Երևանի Ա.Չեխովի անվան հ.55 դպրոցի տնօրենի՝ ծնողխորհրդի կողմից ընտրված թեկնածու համարել առավելագույն ձայներ ստացած Գ. Սարուխանյանին:

Ծնողխորհրդի նախագահ՝
Ծնողխորհրդի քարտուղար՝

 Ա. Աբրամյան
 Լ. Արիստակեսյան